ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 հունիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

78
(2928)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՆՉ ԹԱՔՆՎԱԾ ՀԱՐՑԵՐ Է ԼՈՒԾՈՒՄ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

ՀՀ Կառավարությունը հեղինակել է «Ոստիկանության գվարդիայի մասին» եւ հարակից օրենքների նախագծերի ընդունման փաթեթ, որը, ըստ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրված նախագծերի փաթեթի, «ուղղված է զուտ ոստիկանական ծառայության ստեղծմանը՝ միջազգային ստանդարտներին համապատասխանող նոր սպառազինությամբ ու վերապատրաստված անձնակազմով, որին կվերապահվեն հասարակական կարգի պահպանության եւ հասարակական անվտանգության ապահովման, պետական շենքերի եւ կարեւորագույն օբյեկտների պահպանության, պետական արարողակարգով նախատեսված պատվիրակությունների ուղեկցման, ինչպես նաեւ ռազմական եւ արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման ու այլ գործառույթներ»: Թվում է՝ առաջադեմ մի նախագիծ է, բայց, «թաքնված» լուրջ հարց է լուծում այդ նախագիծը:

Ներկայացնենք փոքր-ինչ ավելի մանրամասն. ոստիկանության գվարդիան ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանում է, որը կոչված է պաշտպանելու անձի իրավունքները եւ ազատությունները, ինչպես նաեւ ապահովելու հասարակության եւ պետության անվտանգությունը:

Այնինչ կա եւս մի կետ, որը հակասում է Հայաստանի պատմության մեջ եղած բոլոր օրենքներին:

Մասնավորապես այն հատվածը, որը սահմանում է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի լրացում. այն սահմանում է՝ «նախատեսված գործառույթները ոստիկանության մարմինները պետք է իրականացնեն զինված ուժերի եւ այլ զորքերի ուժերի կիրառման եւ (կամ) մարտական գործողությունների վարման շրջանները չընդգրկող տարածքներում:

Այսինքն՝ այսուհետ ռազմական դրության եւ պատերազմի ժամանակ սահմանային գոտում ՀՀ ներքին զորքերն այլեւս պետական սահմանի պաշտպանություն չեն իրականացնելու:

Նրանց պաշտպանական գործառույթի սահմանը չի ներառելու ՀՀ պետական սահմանը: Այսինքն՝ ոստիկանները, իսկ ավելի կոնկրետ՝ միայն գվարդիան էլ սահման չի գնա նույնիսկ պատերազմի օրերին:

Նշանակում է՝ 44-օրյա պատերազմի ընթացքում ՆԳՆ զորքերի կատարած ծառայությունը, որը ի նպաստ հայրենիքի պաշտպանության էր, այսուհետ չի լինի. նրանք կծառայեն միայն ի նպաստ ՀՀ իշխանությունների անձերի պաշտպանության:

Ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանն ամեն դեպքում փորձում է սեփական աթոռը պահել՝ բռնի ուժ կիրառելով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ուժային կառույցները խիստ են պատրաստվել, ու անգամ ներքին քննարկում է եղել, որ շատ ավելի խիստ են լինելու: Բանն այն է, որ այսօր ԱԺ է գնալու ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ու, բացի այդ էլ, Բագրատ Սրբազանը հայտարարել էր, որ հունիսի 12-ը կարեւոր «հանգրվան» է լինելու: Արդյունքում՝ իրավապահ համակարգը լուրջ է տրամադրվել, թե ներում-բեկում չի լինելու, ու անգամ չեն խնայելու Սրբազանին: Հիշեցնենք, որ հունիսի 9-ից ընդդիմադիր՝ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասնակիցները շարունակում են գիշերել Բաղրամյան պողոտայում: «Վրանային ավանը մնալու է այստեղ, բայց, բնականաբար, ոչ ամիսներով», - հարթակից հայտարարել էր շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը: «Մեր ասած 96 ժամի մեջ կսահմանափակվենք», - նշել էր նա՝ հավելելով, որ հունիսի 12-ը կարեւոր հանգրվան է լինելու: «Այսօր ո՛չ քայլելու ենք, ո՛չ երթ ենք անելու. պատրաստվում ենք հունիսի 12 ին»:

Էդուարդ Խաչատրյան

Իրավական ապահովման և անձնակազմի կառավարման բաժնի պետ

ՔՊ-ական պատգամավորների ընտանիքի անդամների կարիերան եւ աշխատավարձը սրընթաց աճում են: ԱԺ պատգամավոր Արմեն Խաչատրյանը «նախկին թալանչիների» ժամանակ զբաղեցնում էր բավականին բարձր պաշտոն ՆԳ համակարգում եւ կարծես մինչեւ 2018 թվականը ոչ մի անգամ բարձրաձայն կամ ցածրաձայն չի դժգոհել առկա բարքերից: Փոխարենը այժմ, մասնավորապես նրա որդին՝ փորձագետից արագ «վերածվել» է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարեւորագույն բաժիններից մեկի պետի, աշխատավարձն էլ նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 1.2 միլիոն դրամով: Իհարկե, Նիկոլ Փաշինյանը չի ստել՝ «Ապագա կա՛»: Եվ այդ ապագան ՔՊ-ականների համար է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» դաշինքը անցնող շաբաթ հանդիպել է երկրորդ նախագահ, դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանի հետ: Հանդիպմանը քննարկվել են դաշինքի առաջիկա անելիքները, ինչպես նաեւ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման գործունեության հետ կապված հարցեր: Ընդդիմադիրները վերահաստատել են՝ թե՛ խորհրդարանում, թե՛ փողոցային պայքարում ողջ ռեսուրսով աջակցելու են Բագրատ Սրբազանի առաջնորդած շարժմանը: Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատեց նաեւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանը. «Թե՛ դաշինքի, թե՛ պատգամավորների կազմով երկրորդ նախագահի հետ հանդիպումներ պարբերաբար լինում են, այստեղ զարմանալու առիթ չկա», - ասաց նա:

ԶՐՈՒՅՑ

ՃԻՇՏ Է, ՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ՉԵՆ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՒՄ

Արդեն տեւական ժամանակ է, ինչ «Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնությունը Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի գլխավորությամբ պայքարում է ներկայիս իշխանություններին հեռացնելու համար, այդ իսկ պատճառով էլ կազմակերպվում են բողոքի բազմաթիվ ակցիաներ, հանրահավաքներ:

«Ժողովուրդ» օրաթերթը այսօր զրուցել է հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի հետ:

-Պարոն Ղազարյան, Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը երեկ կարգադրություն է ստորագրել, որի համաձայն՝ հունիսի 17-ին Ազգային ժողովի արտահերթ նիստ է տեղի ունենալու՝ Կառավարության հրաժարականի եւ նոր կառավարություն ձեւավորելու անհրաժեշտության պահանջով: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանն էլ, իր հերթին, հայտարարել է, որ խմբակցությունն այդ օրը նիստին չի մասնակցելու եւ տապալելու է այն:

-Ճիշտն ասած, նախ՝ չեմ հասկանում արտահերթ նիստի օրակարգը, որովհետեւ դա, ըստ էության, իրավական հետեւանքներ չառաջացնող նախաձեռնություն է: Փաստորեն մեր պատգամավորները գնում են ո՛չ թե սահմանադրական ճանապարհով՝ անվստահություն հայտնելու վարչապետին, ինչը ո՛չ միայն իրենց իրավունքն է, այլ այս պայմաններում նաեւ նրանց պարտականությունը, այլ նախաձեռնել են մի նիստ, որի ընթացքում պիտի քննարկեն մի տեքստ, որով վարչապետին կոչ են անում, որ նա անվստահություն հայտնի Կառավարությանը:

Իհարկե Խորհրդարանը ուղերձներ ընդունելու իրավունք ունի, սակայն այդ ուղերձները, որպես կանոն, այն հարցերի վերաբերյալ են, որոնք դուրս են Խորհրդարանի իրավասություններից՝ այդպիսով այլ մարմինների կոչ անելով որոշակի գործողություններ ձեռնարկել. սակայն այս դեպքում Ազգային ժողովը կարող է անվստահություն հայտնել վարչապետին: Սա խորհրդարանական երկիր է, որտեղ Ազգային ժողովն է նշանակում վարչապետին:

Ինչ վերաբերում է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության չմասնակցելուն, ապա սա սահմանադրական օրենքի կոպտագույն խախտում է: Ազգային ժողովի կանոնակարգի համաձայն՝ պատգամավորի պարտականությունների մաս է կազմում ԱԺ նիստերին մասնակցելը: Հիմա, որ Հայկ Կոնջորյանը մասնակցում է ԱԺ հերթական նիստին, ճիշտ է անում, քանի որ դա իր պարտականությունն է: եթե հիմա ընդդիմությունը նախաձեռնել է արտահերթ նիստ, դրան մասնակցելն էլ է իրբ պարտականությունը եւ դա վերաբերում է բոլոր 170 պատգամավորներին: Նիստին պատգամավորը չի կարող մասնակցել միայն բացառիկ դեպքերում՝ գործուղում, առողջական խնդիրներ, կամ այլ անհետաձգելի գործեր, որոնց բացատրությունը կարող է տալ հանրությանը: մարդը հանրային ծառայող է ով ստանում է վարձատրություն, արտոնություններ, բայց հրաժարվում է իր պարտականությունների կատարումից: Սա ապօրինություն է, ինչը լինել չի կարող: Ըստ որում, եթե դա Հայկ Կոնջորյանի անհատական որոշումը չէ, այլ նա դա ասել է խմբակցության անունից, նշանակում է՝ մի բան էլ Սահմանադրությունը այնտեղ են խախտում, քանի որ մեր Սահմանադրությունն ասում է. «Յուրաքանչյուր պատգամավոր ինքն է ներկայացնում ողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով եւ կայացնում է որոշումներ սեփական խղճով եւ համոզմունքներով»: Փաստորեն, եթե Հայկ Կոնջորյանը որոշում է կայացրել բոլորի փոխարեն, ուրեմն ոչ մի պատգամավոր սեփական խղճով ու համոզմունքներով որոշում չի կայացրել. Այսպիսով խախտվում է սահմանադրությունը: Փաստորեն՝ ի դեմս ՔՊ պատգամավորների, մենք գործ ունենք ոչ թե ԱԺ պատգամավորների, այլ կազմակերպված հանցավոր խմբի հետ, որոնք հակասահմանադրական գործողություններով խախտում են երկրի սահմանադրական կարգը:

-Պարոն Ղազարյան, վաղը լրանում է Սրբազան հոր նշած 96 ժամը: Ի՞նչ ակնկալիքներ ունեք:

-Ինքն է առաջնորդում եւ ամեն բան ինքն է որոշում: Ես մեկ հանձնառություն ունեմ՝ կատարել նրա բոլոր հանձնարարությունները եւ որոշումները: Կարծում եմ՝ իր հետագա հայտարարություններում կասի անելիքների մասին, ինչը հիմա դեռեւս չի ասում եւ ճիշտ է անում: Ես այստեղ իր կողքին կանգնած եմ, իր որոշումները կյանքի կոչելու համար:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՈՒՂԵՐՁ

ՇԱՐԺՈՒՄԸ ԲՈԼՈՐԻՆ Է ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Երեկ լրագրողների հետ զրույցի ընթացքում Բագրատ Սրբազանն անդրադարձել է Ազգային Ժողովում ՔՊ-ական պատգամավոր Վահագն Ալեքսանյանի ելույթին:

Ի պատասխան լրագրողների հարցերին՝ սրբազանն ասել է. «Սա ուղերձ է մարդկանց, սա իշխանափոխությունից ավելի է: Այս շարժումն արժեքի, քաղաքական մտքի, ապրումների փոփոխություն է: Մնացածը դատարկ է»: Նա, մատնացույց անելով իշխանությանը, ասաց. «Սրանք ի՞նչ հիմքով են եկել իշխանության: Դրա համար էլ այս վիճակում ենք գտնվում. արժեքային հիմքը սուտն ու կեղծիքն է»: Փաստմանը՝ վաղը վճռորոշ օր է եւ հարցին՝ այս համատեքստում վաղն ի՞նչ գործողություններ են նախատեսվում, Բագրատ սրբազանը պատասխանեց. «Վաղվա համար բոլորին հրավիրում եմ ժամը 15:00-ին ներկա գտնվելու այստեղ: Առաջին օրվանից մարդիկ, որոնք ներգրավված են եղել, բոլորն էլ հավատացել են փոփոխություններին: Այստեղ ենք լինելու. շատ կարեւոր է մեզ համար, որ առաջիկա գործընթացները՝ թե՛ վաղվա, թե՛ հաջորդ օրվա, կարողանանք հասցնել իրենց տրամաբանական եզրահանգմանը: Բոլորին հրավիրում եմ ներկա լինելու ու մասնակցություն ունենալու ողջ գործընթացին: Սա մեկ անձի մասին, կամ ինչ-որ խմբի մասին չէ. սա մեր երկրի խորքային փոփոխության մասին է, բոլորին է սա վերաբերում»:

Լրագրողները հիշեցրին, որ ՀՀ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանը մի քանի ժամ է տվել, որպեսզի հրապարակեն շարժման ֆինանսական ելքերն ու մուտքերը: Այս առիթով Բագրատ սրբազանն ասաց. «Ո՞վ է դա, դա ի՞նչ է, ի՞նչ կերպար ունի: Իրենք չկան, գոյություն չունեն: Այս երկիրը 15 հոգու ձեռքին կամ մեկ հոգու շուրջ հավաքված այդ սեւ ասպետներն ուզում են հասցնել իրենց չար նպատակների իրականացմանը: Նա չկա, գոյություն չունի: Եթե կասեք՝ ով է, ինչ է, կենսագրությունը ցույց կտաք, կպահանջեք այն մարդու ձեռքը կտրել, որը սուտ է խոսում, այն ժամանակ ես կպատասխանեմ: Իրենց ամբողջ ուղեղը փողն է, ֆինանսականը, դրանից չկտրվելը, հանկարծակի, պատահական հայտնված լինելը: Ուրիշ բան իրենք չունեն, չեն էլ կարող մտածել դրա մասին, թե ինչ իրավիճակի են հասցրել երկիրը, որ մարդիկ ստիպված են նորից այս փողոցները դուրս գալու: 2015-ին ենք այս փողոցներում եղել, հիմա ստիպված ենք դարձյալ վերադառնալ նույն շրջանին: Մարդը, եթե բարոյականություն ունենար, 2020-ին պիտի թողներ հեռանար»:

Լրագրողները փաստեցին՝ ՀՀ իշխանությունները վստահ են, որ նոր ընտրությունների դեպքում հաղթելու են: Բագրատ սրբազանն ասաց. «Իրենք պիտի իմանան՝ նոր ընտրություններին մասնակցում են, թե ոչ: Եկեք մեր ապագայից, մեր կյանքից խոսենք, այդ մարդկանց մասին չխոսենք, լուսավոր զգացումների մասին խոսենք: Այդ մարդիկ ո՛չ խելք ունեն, ո՛չ կենսագրություն. իզուր տեղը ինչո՞ւ եք ժամանակ վատնում: Իրենք աքլորի պես խոսում են: Ջիվանու ասած՝ պատմուճանը հագել, բեմ են բարձրացել, խելքի՛ աշեցեք: Բովանդակություն չունեցող մարդիկ են, հայրենիք հանձնած մարդիկ են նրանք, դարերով սրբարաններում ապրած մեր ժողովրդին բնավեր արած, գերեզմանները քանդած մարիկ են»:

ՍԵՓԱԿԱՆ «ԱՊԱՀԱ ԿԱ՛»-Ն Է ՍՏԵՂԾՈՒՄ

Իշխանությունները ՀՀ թոշակառուներին «ավետեցին», որ կենսաթոշակները չեն կարող գեթ մեկ լումայով բարձրացնել, քանի որ բյուջեում գումար չկա: Դրան զուգահեռ՝ երկրաչափական պրեգրեսիայով աճում են ՔՊ-ականների կանանց աշխատավարձերը:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ ՔՊ պատգամավոր Արթուր Հովհաննիսյանի կնոջ՝ կրտսեր ծրագրավորող Մարիամ Ավագյանի աշխատավարձը 2022 թվականին կազմում էր 3.6 միլիոն դրամ, ապա հաջորդ տարի, 2023 այն արդեն 6.7 միլիոն է:

Փաստորեն իշխող վերնախավը սեփական «Ապագա կա՛»-ի նոր կուրս է որդեգրել՝ անխնա բարձրացվում է նրանց կանանց եւ ընտանիքի բազում անդամների աշխատավարձերը, որոնք հարյուրներով, գուցե հազարներով գրանցվել են մասնավորապես պետական հիմնարկների հաստիքների վրա:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԸՆԴՈՒՆՎԻ

Խորհրդարանը, ի թիվս այլ հարցերի, կքննարկի նաեւ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որտեղ փաստաբաններին վերաբերող խնդրահարույց իրավակարգավորումներ կան:

Նշենք, որ նախագծով նախատեսվում է փաստաբանական ծառայությունների մատուցումից առաջացող շրջանառության հարկը 2025 թվականի հունվարի 1-ից բացառել, ինչի հետեւանքով փաստաբանները հարկադրված են լինելու գործել հարկման ընդհանուր համակարգում, ըստ այդմ՝ մատուցվող փաստաբանական ծառայությունների համար լրացուցիչ կիրառվելու է 20 տոկոս ԱԱՀ (ավելացված արժեքի հարկ): Դրանից զատ՝ վճարվելու է նաեւ շահութահարկ, որի դրույքաչափը 18 տոկոս է:

Այս ամենի պատճառով շեշտակի կբարձրանա փաստաբանական ծառայությունների ինքնարժեքը, հետեւաբար՝ նաեւ գները:

Մայիսի 21-ին հայտնի դարձավ, որ ՀՀ փաստաբանների պալատի անդամները գործադուլ են անում եւ պահանջում, որ ԱԺ-ն օրենքի նախագծից հանի փաստաբաններին վերաբերող խնդրահարույց իրավակարգավորումները:

Օրեր առաջ էլ փաստաբանները ԱԺ-ում հանդիպում էին ունեցել պատգամավորների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ չնայած փաստաբանական համայնքի դժգոհություններին, ՔՊ-ն մտադիր է արդեն երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունել նախագիծը:

ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿՐԿԻՆ ԽԱՓԱՆՎԵԼ Է

Դատական գործերի մակագրման էլեկտրոնային համակարգը կրկին խափանվել է. արդեն երկու օր է: Այս մասին Facebook-ի իր էջում խնդրի մասին ահազանգել է փաստաբան Արսեն Բաբայանը:

Նա հիշեցրել է՝ այդ էլեկտրոնային համակարգն է պատահականության սկզբունքով որոշում, թե որ դատավորը պետք է քննի, օրինակ, կալանքի վերաբերյալ վերաքննիչ բողոքը:

«Պատճա՞ռը, կհարցնեք դուք... Շատ պարզ է պատճառը. նորից ուժգնացել են քաղաքական հետապնդումները եւ պրոգրեսիվ աճում է քաղբանտարկյալների թիվը», - նշում է փաստաբանը:

ՇՈՒՇԻՆ «ԴՐԱԽՏ» Է ԱՆՎԱՆԵԼ

Բելառուսը կմասնակցի օկուպացված Արցախի տարածքներում վերականգնման աշխատանքերին, ինչի մասին հայտնել է այդ երկրի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն՝ Ադրբեջանի Միլլի Մեջլիսի նախագահ Սախիբա Գաֆարովայի հետ հանդիպման ժամանակ:

Նա նշել է, որ ջերմությամբ է հիշում այդ տարածքներ իր այցը՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ուղեկցությամբ:

«Շուշայում (Շուշի-Խմբ.) ես նրան ասացի. «Դրախտում եք ապրում»: Լինելով մեր մոլորակի շատ անկյուններում՝ ես ոչ մի տեղ չեմ տեսել նման վայր՝ մաքուր օդ, գեղեցիկ բնություն: Համոզված եմ, որ այս տարածքներում կյանքը վերականգնելով՝ եւս մեկ սխրանք էլ կանեք: Մենք ուրախ կլինենք մասնակցելու այս աշխատանքներին, մենք որոշել ենք ուղղությունները, ոչ մի խոչընդոտ չկա», - ասել է Լուկաշենկոն:

ՌՈՒՍ ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄ

Հունիսի 10-ին կայացել է Թուրքիայի եւ Ադրբեջանի նախագահներ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ու Իլհամ Ալիեւի հանդիպումը: Կողմերը քննարկել են Պաղեստինի Գազայի հատվածում տիրող իրավիճակը, ինչպես նաեւ այժմ ադրբեջանական օկուպացիայի ներքո գտնվող Լեռնային Ղարաբաղին (Արցախ) ու Հյուսիսային Կիպրոսի թուրքական ինքնահռչակ հանրապետությանը վերաբերող հարցեր: Էրդողանն ընդգծել է, որ Թուրքիան հետեւում է Ղարաբաղում տեղակայված (44-օրյա պատերազմից հետո-խմբ.) ռուսական խաղաղապահ ուժերի դուրսբերման գործընթացին:

COP29 - Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) «Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանի գումարում»:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ՔԱՅԼԵՐԸ

ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՀՄԿԵԼ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՈՎ

«Ասում են՝ ճնշման արդյունքում է, որ Ոսկեպարի հատվածում այդ առաջընթացն այնքան չեղավ, ինչքան Ադրբեջանն ակնկալում էր: Այսինքն՝ միայն պայքարի արդյունքում կարող ենք զսպել Ադրբեջանի պահանջները, որոնք անհատնելի են:

Հիմա էլ ադրբեջանական կողմը սպասում է, որ այս շարժումը մարի, Հայաստանում բողոքողներ չլինեն, որ հերթական պահանջը ներկայացնի: Մենք նաեւ կանգնեցնում են գործընթացներ, աշխարհաքաղաքական խաղաքարտեր ենք խառնում իրար», - Բաղրամյան պողոտայում լրագրողների հետ ճեպազրույցում հայտարարեց ՀՀ ԱԺ պատգամավոր Գառնիկ Դանիելյանը՝ անդրադառնալով Բագրատ սրբազանի գլխավորած շարժման հաջողություններին: Լրագրողների դիտարկմանը՝ «խոստանում էիք, որ պայքարը վճռական փուլ է մտնելու, բայց ընդամենը ԱԺ-ում ուղերձի նախագիծ է ներկայացվել», եւ հարցին՝ «համարում եք, որ այդպես մարդկանց սպասելիքները կարո՞ղ են բավարարվել», պատգամավորն արձագանքեց. «Կարծում եք՝ այդ նախաձեռնությունը պակա՞ս կարեւոր է: Բոլոր նախաձեռնությունները եւ անելիքները չափազանց կարեւոր են: Այսօրվա ակցիան կարեւոր է. թվում է, որ ընդամենը ակցիա է, բայց շատ մեծ խորհուրդ ու նշանակություն ունի: Մեր երկիրն այն վիճակում է, որ ցանկացած փոքր քայլ, մեծ քայլ կարող է արդյունք տալ»: Խոսելով շարժման ձեռքբերումների մասին՝ նա ասաց. «Կարողացել ենք ամբողջ աշխարհում բարձրացնել մեր բողոքի ու անհամաձայնության ձայնը: Մինչեւ այդ ամբողջ աշխարհը մեզ ասում էր՝ ասում եք, որ իշխանությունը լեգիտիմ չէ, բայց ՀՀ ժողովուրդը որեւէ կերպ իր դժգոհությունը չի հայտնում, գործընթացներ չկան: Մեր աշխատանքի արդյունքն է, որ Հանրապետության հրապարակում հավաքվում են տասնյակ հազարավոր մարդիկ»: Լրագրողների հակադարձմանը՝ միեւնույն է, Տավուշում սահմանագծում եղավ, Գառնիկ Դանիելյանը պատասխանեց. «Իրենց խնդիրը հետեւյալն էր. մենք ասացինք, որ նման բան տեղի է ունենալու: Առաջիններից մեկը ես եմ բարձրացրել այդ տարածքների հանձնման հարցը: Իշխանավորներն իմ աչքերի մեջ նայելով՝ ստել են, ասել են՝ նման բան գոյություն չունի, հետո իրենց առաջնային տարբերակում նաեւ փակ քննարկման ժամանակ է այդ խոսակցությունը եղել: Ես ասել եմ՝ պատրաստվում եք ոսկեպարցիների անմիջապես քթի տակ տեղակայել ադրբեջանցիներին: Ադրբեջանցիները պետք է տեղակայվեին Ոսկեպարի դպրոցի հարեւանությամբ: Իրենք խոստովանել են. Արարատ Միրզոյանն ինձ ասել է՝ լավ էլ տեղերը գիտեք: Նաեւ մեր ճնշմամբ է, որ մենք կարողացել ենք պայքարելով այդ ժողովրդի հետ այս պահի դրությամբ, համենայն դեպս, գյուղի դպրոցի մոտով չի անցնում սահմանը: Սա որոշակի հաջողության արդյունք է: Մեր պլանների մեջ մտել է այն, որ առհասարակ առաջխաղացում տեղի չունենա, որ այն սահմանները, որոնք կան, մնան»:

Ըստ Գառնիկ Դանիելյանի՝ մինչեւ խոշտանգումները, ծեծը պատասխան չստանան, մեղավորները պատասխանատվության չկանչվեն, ԱԺ-ում նստածներ կմտածեն, որ ամեն ինչ ճիշտ են անում: Գառնիկ Դանիելյանը չմանրամասնեց հետագա անելիքների մասին՝ նշելով, որ նախապես իմանալու դեպքում իշխանություններն իրենցից առաջ գործողություններ են նախաձեռնում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՎԱՅՐ ԴՆԵԼ ՄԱՆԴԱՏԸ

Եթե խորհրդարանում չկա ընդդիմադիր խմբակցություն, ապա այս իրավունքները վերանում են եւ դրանք ամբողջությամբ անցնում է ընտրատարածքային հանձնաժողովին, որն ամբողջությամբ ձեւավորված է իշխանության ներկայացուցիչներից: Այսինքն՝ պահանջելով ընդդիմությանը մանդատներից հրաժարվել, դուք զրկում եք ընդդիմությանը ընտրական հանձնաժողովներում առնվազն 50 %-ը վերահսկելու հնարավորություններից, որպեսզի ընտրությունները չկեղծվեն: Այս մասին երեկ՝ հունիսի 11-ին, լրագրողների հետ զրույցում ասել է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

«Մեզ համար չափազանց կարեւոր է այն իրավիճակը, երբ այս իշխանությունը բերում է ակնհայտ հակապետական, հակահիրավական, հակասահմանադրական մի նախաձեռնություն, որին ի պատասխան՝ չափազանց կարեւոր է լինում մանդատներից հրաժարվելը, որպեսզի հետագայում դու կարողանաս վիճարկել նման փաստաթղթի ընդունումը», - ասել է նա:

ԻՐ ԴԵՄ ՇԱՐԺՈՒՄՆ ՈՒՂՂՈՐԴՎԱԾ Է ՀԱՄԱՐՈՒՄ

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Նազարյանը նշել է. որ իր անվան շուրջ աղմուկը ուղղորդվում է. «Ես գիտեմ՝ ովքեր են, չեմ հրապարակում, հետո իմ հուշերի գրքում մի օր կգրեմ էդ մասին, չեմ ուզում, որ տնից ամոթով դուրս չգան:

Ինձ համար, իմ ընտանիքի համար ցավալի է, երբ կարդում ենք, որ Գեղամ Նազարյանին Նիկոլ Փաշինյանը 3,5 մլն դոլար է տվել, որ ֆրակցիայում բաժանի, Սեյրան Օհանյանն էլ անտառը «ճղելով» շուտ ուզում էր հասնի Կիրանց, որ 100 հազարը վերցնի: Այս մակարդակի ենք հասել: Իրոք, ուզում եմ շարժմանը քիչ երեւալ, որովհետեւ անհարկի մեղադրանքներ են լինում՝ այս բառը այսպես չասացիր, շեշտը սխալ դրեցիր. ո՛չ ասել եմ ես եմ վարչապետի թեկնածուն, ո՛չ ասել եմ, որ ուզում եմ հեղափոխություն անեմ, միապետություն հաստատեմ, ես միապետ դառնամ, ոչ ասել եմ՝ ուզում եմ օդանավակայանը վերցնեմ ինձ, անկեղծ եմ ասում, իրոք, չեմ հասկանում»:

Գեղամ Նազարյանը վստահեցրեց, որ միտք չի ունեցել Կիրանցում ճանապարհը փակողներին ցրելու. «Մեջքիս հետեւից, անունները չտամ, մի քանի հոգի ասացին՝ ժողովուրդ, Գեղամն եկել է, որ ասի՝ «ճանապարհը բացեք», անմիջապես որակում են սադրանք: Այնքան այն դպրոցի մասին ասացին՝ «Գեղամի առանձնատուն դարձավ», «սահմանային եսիմ ինչ»: Գեղամի տառապանքները հասկանո՞ւմ են ինչ է, երբ իր այգուց տեսնում է սահմանը»:

Հարցին՝ դուք պատրա՞մտ եք ներել Նիկոլ Փաշինյանին, նա պատասխանեց. «Ես Նիկոլ Փաշինյանին վաղուց եմ ներել, իմ Աբգարը ինձ ասել է, որ ես իրեն ներեմ, ինձ տեսիլք է եկել, ասել է, բայց ներել՝ չի նշանակում իրեն հանդուրժել վարչապետի պաշտոնում»:

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԻ Է

19-ԱՄՅԱ ՏՂԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ԴԵՊՔԸ

Իրավապահները դեռ փնտրում են Սարյան փողոցում «Գինու փառատոն»-ի 19-ամյա տղային սպանած անձին:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հայտնի է, թե ով է նրան զրկել կյանքից: Մեզ հասած լուրերի համաձայն՝ իրավապահները փնտրում են Գորիս քաղաքի բնակիչ 24-ամյա Արթուր Մկրտչյանին, որը կասկածվում է «Գինու փառատոն»-ին 19-ամյա երիտասարդին կյանքից զրկելու մեջ:

Երեւանի կենտրոնում՝ Սարյան փողոցում, որտեղ անցկացվում է «Գինու փառատոնը», դանակահարություն է տեղի ունեցել, ինչի հետեւանքով կա սպանված:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ մահացածը 2005 թվականին Աշոտ Քոչարյանն է:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վիճաբանությունը սկսվել է այն բանից հետո, երբ փառատոնի մասնակիցներից մեկը հայհոյել է ու իրավիճակը լարվել է. հայհոյանքի պատճառով սկսվել է վիճաբանություն եւ 19-ամյա երիտասարդին դանակահարել են: Այս պահին իրավապահները փորձում են գտնել սպանության ենթադրյալ կատարողին:

Հիշեցնենք, որ քննչական կոմիտեն հաղորդագրություն էր տարածել առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում քննություն է իրականացվում՝ հունիսի 10-ին Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայում տեղի ունեցած դանակահարության մեկ այլ դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՔԿ-ից:

«2024 թվականի հունիսի 10-ին՝ ժամը 02:14-ին, ապա 02:35-ին, ահազանգեր են ստացվել այն մասին, որ կտրած-ծակած վերքերով շտապ օգնության խմբի կողմից «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր եւ «Էրեբունի» ԲԿ են տեղափոխվել Արմնավիրի մարզի 19-ամյա եւ Գեղարքունիքի մարզի 24-ամյա բնակիչներ, որոնցից մեկը՝ 19-ամյա երիտասարդը, գտնվում է ծայրահեղ ծանր վիճակում: Նույն օրը՝ ժամը 02:50-ին, հիվանդանոցային համալիրից ստացված հաղորդման համաձայն՝ ժամը մոտ 02:20-ին գրանցվել է վերջինիս կենսաբանական մահը:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի, 44-155-րդ հոդվածի 1-ին մասի, 334-րդ հոդվածի 1-ին մասի եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Պարզվել է, որ հունիսի 10-ին՝ ժամը 01:10-ի սահմաններում, Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտա 42 հասցեի մոտ մի խումբ անձինք, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության հանդեպ, վիճաբանել են միմյանց հետ, բարձրաձայն հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ, որի ընթացքում վիճաբանության մասնակիցներից մեկն իր մոտ գտնվող կտրող-ծակող առարկայով հարվածներ է հասցրել վիճաբանության մյուս մասնակիցներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում հայտնաբերվել եւ առգրավվել են արնանման հետքեր եւ այլ իրեր, հարցաքննվել են մի շարք անձինք, նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ:

Ստացվել են դեպքի վայրը եւ դեպքը տեսանկարահանող երկու սարքերի տեսագրություններ եւ զննվել:

Կատարված քննչական եւ վարութային այլ գործողությունների, ինչպես նաեւ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է հանցագործության ենթադրյալ կատարած անձի ինքնությունը, ով Սյունիքի մարզի բնակիչ է՝ծնված 2000 թ.:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ վերջինիս հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու ուղղությամբ», - ասված է հաղորդագրության մեջ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՎԱՐՁԱՎՃԱՐ ԵՆ ՎԵՐՑՐԵԼ

«Հայբուսակ» համալսարանի ռեկտորը եւ մի շարք աշխատակիցներ 2013 թվականից մինչեւ 2017 թվականն ընկած ժամանակահատվածում տարբեր անձանցից վարձավճար են վերցրել՝ նշված համալսարանի Իջեւանի մասնաճյուղ ընդունելու պատրվակով:

Դատախազը 2024 թվականի մայիսի 6-ին «Հայբուսակ» համալսարանի ռեկտոր Ս.Հ.-ի եւ մի շարք աշխատակիցների նկատմամբ հարուցել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով կատարված խարդախություն):

2024 թվականի մայիսի 6-ին Ս.Հ.-ի կողմից վերականգնվել է հանցագործության արդյունքում տուժողներին պատճառված 15 մլն դրամ վնասը:

Նախաքննությունն ընթացքի մեջ է:

Երեւան քաղաքի դատախազ Ռաֆայել Մանուկյանը 2024 թվականի հունիսի 10-ին միջնորդագիր է հասցեագրել ՀՀ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարության գլխավոր քարտուղարին՝ միջնորդագրում նշված կեղծ դիպլոմներն անվավեր ճանաչելու, «Հայբուսակ» համալսարան ՍՊ ընկերության լիցենզավորման իրավաչափության, գործող ռեկտորի պաշտոնավարումը դադարեցնելու հնարավորության հարցերը քննարկելու նպատակով:

ՀՈՒՇԱՆՎԵՐ ԹՂԹԱԴՐԱՄ Է ԻՐԱՑՎԵԼ

Հունիսի 10-ին ՆԳՆ ոստիկանության Տավուշի մարզի պարեկները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցի մթերային խանութում մի քաղաքացի գնումներ կատարելու դիմաց վճարել է 5000 դրամ անվանական արժեքով կեղծ թղթադրամ:

Ոստիկանության Տավուշի բաժնի եւ մարզի պարեկների համատեղ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ մթերային խանութում հուշանվեր թղթադրամն իրացրել է Բերդ քաղաքի բնակիչ 48-ամյա տղամարդը:

Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին: Հուշանվեր թղթադրամը վերցվել է:

«Զրառի» խողովակները գողացել էին. Մասիսի ոստիկանների բացահայտումը

Հունիսի 5-ին Մասիսի քրեական հետախույզները ստացել են օպերատիվ տեղեկություն, որ մի կյուրինցի եւ մի էրեբունցի Խարբերդում գտնվող ոռոգման ջրագծի մոտից գողացել են խողովակներ: Տեղեկությունը ստուգվեց եւ հաստատվեց:

Պարզվեց, որ հունիսի 1-ի ցերեկը Նոր Կյուրին գյուղի բնակիչ 42-ամյա տղամարդն է գողացել խողովակները, որոնք տեղափոխել է Երեւանի Խաղաղ Դոնի փողոցի 40-ամյա բնակչի բեռնատարով:

Բացատրական աշխատանքի արդյունքում նորկյուրինցին ներկայացել է ոստիկանության Մասիսի բաժին եւ խոստովանել արարքը: Նա նաեւ հայտնել է, որ խողովակները նույն օրը վաճառել է Այնթապ գյուղում գտնվող գունավոր մետաղների ընդունման կետում:

«Զրառ» փակ բաժնետիրական ընկերությանը պատճառվել է ավելի քան մեկ միլիոն դրամի վնաս:

ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԱԼԱՎԵՐԴԻՈՒՄ ՀՆՉԱԾ ԿՐԱԿՈՑՆԵՐԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Ալավերդիում հնչած կրակոցներից:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ կրակոցներից առաջ կողմերը ավտոմեքենայի վթարի հարց ու պատասխան են ունեցել միմյանց միջեւ եւ ճիշտ ու սխալի հարց են բարձրացրել, թե ով է մեղավոր, որից հետո հարցը իբր համարել են լուծված ու բաժանվել են: Եվ ահա, բաժանումից երկու օր հետո հնչել են կրակոցները:

Հիշեցնենք, որ shamshyan.com-ը գրել էր, որ հունիսի 10-ին, կրակոցներ են հնչել Լոռու մարզում: Ժամը 14:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Լոռու մարզային վաչությունում եւ ոստիկանության Թումանյանի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Ալավերդի քաղաքի «Ալավերդի» բժշկական կենտրոն է տեղափոխել հրազենային վնասվածքով մի քաղաքացի:

Հիվանդանոց են ժամանել ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ Արթուր Ջաքարյանը, վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ Միհեր Դավթյանը, ոստիկանության Թումանյանի բաժնի պետ Արտակ Գյուրջանյանը:

Հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին հայտնել են, որ վիրավորը գտնվում է վիրահատարանում եւ ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու:

ԿՐԱԿՈՂԸ ԳՈՒՅԵ ԵՐԿԲԻՑ ԴՈՒՐՍ Է ԱՐԴԵՆ

Իրավապահների կողմից շարժման անդամների գործընթացները շարունակվում են. ինչ է ահազանգում փաստաբան Արսեն Բաբայանը ԱԱԾ-ն ձերբակալել է շարժմանն աջակցելու համար Քենիայից Հայաստան ժամանած «Արթուր եղբայրներին»:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում է փաստաբան Արսեն Բաբայանը:

«Արթուր եւ Արտակ Սարգսյանները (Arthur Brothers) Երեւանի քննչական կոմիտեի քննիչի որոշմամբ 72-ժամյա ռեժիմով ձերբակալվեցին:

Եղբայրները կասկածվում են ապօրինի զենք պահելու մեջ: Նրանց մոտ չի հայտնաբերվել ոչ զենք ու ոչ էլ որեւէ ապօրինի առարկա:

Որպես վերջիններիս պաշտպան հստակ արձանագրում եմ, որ Արթուր եւ Արտակ Սարգսյանների ձերբակալումն ամբողջությամբ ապօրինի է եւ պայմանավորված է բացառապես Սրբազան շարժմանը նրանց մասնակցությամբ», - գրել է նա:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 10-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 103 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԱՆԻՄԱՍՏ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչները ահազանգում են, որ 9-րդ՝ ավարտական դասարանի քննություններից մեկում համատեղված են պատմությունը եւ գրականությունը, սարքելով անիմաստություն,խառնաշփոթ: Պատմությունը եւ գրականությունը մեծ գիտություններ են, նրանց միախառնումը միասնական քննության տեսքով դրական արդյունք չի տվել: Նմանապես, բնագիտական առարկաներն էին նախկինում միացրել, կենսաբանության եւ ֆիզիկայի համատեղ քննության ժամանակ աշակերտը պետք է ինչ-որ նախագիծ ներկայացնի, որը պետք է զարգացնի կարծիք հայտնելու աշակերտի կարողությունները: Տավուշի մարզի ուսուցիչները դժգոհություն հայտնեցին բարեփոխումների անվան տակ հանրակրթական համակարգը քանդելու ուղղությամբ ՔՊ-ական իշխանության քայլերից:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽԱԽՏՈՒՄԸ՝ ԲԵՐՔԱԲԵՐՈՒՄ

Իջեւան համայնքի սահմանամերձ Բերքաբեր գյուղի բնակիչներից տեղեկացա, որ սահմանազատման գործընթացում ադրբեջանական կողմը խաբել է, Ղզըլ Հաջիլի գյուղի մատույցներից հայկական մեկ դիրքը նահանջել է, դրա փոխարեն հայկական տարածքին մոտակա մի դիրքից ադրբեջանական զինուժը պետք է նահանջեր, սակայն չի նահանջել, մինչ այժմ էլ այնտեղ է տեղակայված: Բերքաբերի որոշ բնակիչներ էլ կարծում են, որ ոչ թե ադրբեջանական կողմն է խախտել նախնական պայմանավորվածությունը, այլ Նիկոլ Փաշինյանն է համաձայնվել միակողմանի զիջումների, սակայն Բերքաբերի բնակիչներին այդ մասին չի հայտնել, այլ գյուղացիներին խաբել է,որ ադրբեջանական զինուժը պետք է մի դիրքից նահանջի: Ադրբեջանի հետ սահմանազատաման հետեւանքով Բերքաբերեւ գյուղը եւս մի վնաս է կրել: Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար Տիգրան Հարությունյանիից տեղեկացա, որ Բերքաբեր գյուղը տեւական ժամանակ է, ինչ զրկվել է Աճարկուտ գյուղից սկիզբ առնող խմելու ջրագծի ջրից: 2000-2009 թվականներին Լինսի հիմնադրամի «Ճանապարհաշինության ԾԻԳ» պետական հիմնարկի տնօրեն Էդուարդ Բեզոյանի «Ճանապարհ» ընկերությունը Ադրբեջանին հանձնվելիք միջպետական ավտոճանապարհի Կիրանցի կամուրջը շրջանցող , Աճարկուտ գյուղ մտնող ճանապարհի սկզբնամասում, մոտ 100 մետր երկարությամբ հատվածում վնասել է Բերքաբերը սնուցող, բաց կիսախողովակով խմելու ջրատարը: Բերքաբերի վարչական ղեկավարի խոսքերով՝ խմելու ջրագիծը հայտնվել է նոր կառուցվող ճանապարհի տարածքում, այդ պատճառով է վնասվել: Տ. Հարությունյանը հայտնեց, որ ջրագծի վնասված հատվածի փոխարեն այլ տեղանքում կկառուցվի փակ խողովակաշար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՐՈՇՈՒՄ

«ԽՈՇՈՐ ՇԱՀՈՒՄ», ՈՐՔԱՆ Է ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԹԻՎԸ

Հայաստանում խաղային կազմակերպիչը 5 միլիոն դրամից ավելի շահման դեպքում պետական բյուջե պետք է վճարի 10 տոկոս եկամտային հարկ:

Այս մասին երեկ Ազգային ժողովում տնտեսական հարցերի հանձնաժողովի նիստում, խաղային գործունեության կարգավորման մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի քննարկման ընթացքում, ասել է Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանը:

Ըստ նրա՝ սահմանվում է «խոշոր շահում» հասկացությունը, որ 5 միլիոն դրամը գերազանցող շահումն է: Առաջարկվում է 5 միլիոն դրամը գերազանցող շահման դեպքում սահմանել 10 տոկոս եկամտային հարկ:

Պետական եկամուտների կոմիտեի նախագահը հիշեցրել է, որ խաղային ոլորտը հիմա էլ կարգավորված է, պատշաճ հարկման դաշտում է. «Այս նախագծով մենք կարգավորում ենք բուն շահումների հարկումը, որոնք գործող Հարկային օրենսգրքով համարվում են նվազեցվող եկամուտ եւ չեն հարկվում»:

Առաջարկվում է, որ շահումով խաղի կազմակերպիչը շահումից պահի եկամտային հարկը եւ փոխանցի պետական բյուջե:

Ինչ վերաբերում է մնացած բոլոր շահումներին, ապա գործում է տարեկան կտրվածքով հաշվարկի մեթոդաբանություն. «Այսինքն՝ տարվա ընթացքում կատարված բոլոր խաղադրույքների եւ ստացված շահումների դրական տարբերության առկայության դեպքում առաջարկում ենք, որ ֆիզիկական անձը տարեկան հայտարարագրով արտացոլի տվյալ դրական տարբերությունը եւ դրա նկատմամբ 5 տոկոս եկամտային հարկի դրույքաչափով վճարում կատարի պետական բյուջե»:

Բաբկեն Թունյանն ամփոփեց՝ խոշոր շահումները հարկվելու են 10 տոկոս եկամտային հարկով, հարկային գործակալը հանդիսանալու է տվյալ ընկերությունը. «Իսկ փոքր շահումները, որոնք տարվա ընթացքում կլինեն, եւ համապատասխան մարմինը կհաշվարկի զուտ շահումը, հարկվելու են 5 տոկոսով: Դրա վճարումը կատարելու է քաղաքացին իր եկամուտների հայտարարագիրը ներկայացնելիս»:

Մինչեւ առաջարկվող կարգավորման ուժի մեջ մտնելը ուժի մեջ կմտնեն այլ կարգավորումներ եւս: Հայաստանում գործող տելեկոմները պետք է արգելափակեն Հայաստանում չլիցենզավորված շահումով խաղերի գործողությունը երկրում, այսինքն՝ հնարավոր չի լինի մուտք գործել այդ կայքեր, առեւտրային բանկերն էլ պետք է արգելափակեն ցանկացած վճարում ՀՀ-ում չլիցենզավորված խաղային ոլորտի կազմակերպիչներին:

Նախագիծը ստացավ դրական եզրակացություն, այն առաջիկայում կքննարկվի Ազգային ժողովի լիագումար նիստում:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ԿԱ

Օրերս տեսախցիկները նկարահանել են, թե ինչպես է մայր գորշ արջն ապահով շրջում իր ձագերի հետ Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի (CWR) տարածքում:

Բնության պահպանության միջազգային միությունը (IUCN) նշում է, որ աշխարհում ընդհանուր առմամբ հայտնաբերվել է գորշ արջի 44 ենթապոպուլյացիա: Դրանցից շատերը փոքր են, իզոլացված եւ կարիք ունեն պահպանության, ուստի IUCN կողմից գնահատվել են առանձին-առանձին: Այդպիսին է նաեւ սիրիական գորշ արջի ենթապոպուլյացիան, որը հանդիպում է Հայաստանում:

Ընդգծենք, որ սիրիական գորշ արջն (Ursus arctos) ընդգրկված է ՀՀ կենդանիների կարմիր գրքում եւ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: ԲՊՄՄ Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B2ab (iii,iv): ԿԳ տվյալների համաձայն՝ շատ մեծ արեալ (Եվրասիա եւ Հյուսիսային Ամերիկա) ունեցող տեսակ է: Հանդիպում է Արարատի, Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի, Լոռու, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերում: Երբեմն կարող է մտնել Շիրակի եւ Արագածոտնի մարզեր:

Գրանցվել է ծ.մ. 400-500 մինչեւ 3000 մ բարձրություններում: ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալներով՝ թվաքանակը հայտնի չէ, սակայն հավանաբար կայուն է: Այն, որ արջերը հաճախ մտնում են գյուղեր՝ վնաս հասցնելով պտղատու այգիներին եւ փեթակներին, դրանց մեծ թվաքանակի վկայություն չի կարելի համարել: Ավելի հավանական է, որ դա բիոտոպերի քայքայման եւ կերային ռեսուրսների անբավարարության հետեւանք է, որը բերում է պոպուլյացիայի մասնատմանը:

«ԵՐԵՎԱՆԻ ԳԻՆՈՒ ՕՐԵՐԸ»՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿԻ» ՀԵՏ

Երրորդ տարին անընդմեջ Ակբա բանկի աջակցությամբ Երեւանում կազմակերպվել է «Երեւանի գինու օրեր» փառատոնը, որի շրջանակում մեկ վայրում են հավաքվել Հայաստանի լավագույն գինեգործները, սոմելյեներ ու պարզապես գինեսերներ:

Փառատոնի գլխավոր նպատակն աշխարհին հայ գինեգործների աշխատանքի ներկայացումն է, ինչպես նաեւ արտահանման խթանումն ու միջազգային հարթակներում տեղական արտադրանքի ներկայացումը, տուրիզմի զարգացումը:

«Արդեն 3-րդ տարին է, որ օժանդակում ենք «Երեւանի գինու օրեր» միջոցառման կայացմանը: Այս փառատոնը մեր մայրաքաղաքի համար յուրահատուկ տոնի է վերածվել, որը թույլ է տալիս նաեւ ներկայացնելու մեր գործընկերոջը՝ Visa միջազգային վճարահաշվարկային համակարգը: Նմանատիպ միջոցառումներն օժանդակում են փոքր եւ միջին արտադրողներին, որպեսզի մուտք գործեն շուկա եւ իրենց արտադրանքը ներկայացնեն»,- նշել է «Ակբա» բանկի բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Մելքոնյանը:

«Անցյալ տարվա համեմատ այս տարի 12-ով ավելացել է մասնակից գինեգործների թիվը՝ հասնելով 87-ի: 2019թ.-ից Ակբա բանկը «Երեւանի գինու օրերի» կողքին է ու այդ գործընկերությունը վերածվել է ընկերության: Մենք հասկանում ենք ինչ կարեւոր նպատակի շուրջ ենք աշխատում: Կարող ենք ասել, որ այս համագործակցության շնորհիվ է նաեւ, որ «Երեւանի գինու օրերն» այսքան մասշտաբային են», - նշել է «ԷվենտՏուրա» ընկերության համահիմնադիր, տնօրեն Մերի Բաղալյանը:

Հայաստանում գյուղատնտեսության, գինեգործության եւ տուրիզմի զարգացումը ռազմավարական նշանակություն ունի Ակբա բանկի համար:

2023թ.-ին փառատոնն ունեցել է 120.000 այցելու. ամեն տարի մասնակիցների քանակը ավելանում է շուրջ 30%-ով: «Երեւանի գինու օրեր» փառատոնին մասնակցելու են գալիս ԱՊՀ-ից, եվրոպական երկրներից, Միացյալ Նահանգներից, Կանադայից, Ավստրալիայից եւ բազմաթիվ այլ երկրներից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 1 մարդ զոհվել է, 24-ը՝ տացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

IDBank

idcoin: IDBank–Ի ՆՈՐ ԳՈՐԾԻՔԸ

IDBank-ը հայտարարում է հաճախորդների հավատարմության համակարգում նոր գործիքի՝ idcoin-ի մասին: Բանկից տեղեկացնում են, որ հաճախորդներն այսուհետ ունեն հնարավորություն կուտակելու հավատարմության նոր միավորներ, որոնք կարտացոլվեն ինչպես Idram&IDBank հավելվածում, այնպես էլ գործընկեր idplus լոյալության հարթակում:

Մեկ idcoin-ը հավասար է մեկ դրամի, սա նշանակում է, որ կուտակված միավորները կարելի է լիարժեք օգտագործել ցանկալի գնումների համար: Պարզապես անհրաժեշտ է սքանավորել QR կոդը Idram&IDBank հավելվածով եւ համակարգը, ի թիվս վճարման այլ աղբյուրների, կառաջարկի նաեւ idcoin-ը: Եթե այդ պահին չեք ցանկանում օգտագործել Ձեր միավորները, ապա կարող եք պարզապես անջատել կանաչ կոճակը եւ վճարումը կատարել այլ աղբյուրներից:

Idcoin-ի նախագծի ղեկավար Գոհար Ղուկասյանի խոսքով՝ idcoin-ը հնարավոր չէ գնել կամ վաճառել: «Հաճախորդները կարող են ստանալ idcoin-ը պրոդուկտների, արշավների, հավատարմության այլ ծրագրերի շրջանակում, որոնց մասին կարելի է տեղեկանալ IDBank-ի պաշտոնական կայքից. այստեղ պարբերաբար կհրապարակվի մանրամասն տեղեկատվություն: Արդեն հունիսի 1-ից, օրինակ, IDBank-ի մի շարք քարտերով վճարումներ կատարելիս կարելի է ստանալ idcoin-ներ», - ասում է Գոհար Ղուկասյանը:

Այսպես, հունիսի 1-ից սկսած IDBank-ի Visa Rocket, Travel, Visa Platinum, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition քարտերով կատարված վճարումների դիմաց, բացի տվյալ քարտերով վճարվող քեշբեքներից, կստանաք նաեւ գնման 0.5%-ի չափով idcoin-եր, որոնք կկարողանաք օգտագործել բոլոր այն վայրերում, ուր կա Idram QR-ով վճարելու հնարավորություն:

Չմոռանանք նշել, որ idcoin-ը հնարավոր է օգտագործել նաեւ կոմբո-վճարումների ժամանակ: Համակարգն ավտոմատ կառաջարկի վճարել idcoin-ով, եւ եթե idcoin-ի մնացորդը չբավարարի, ապա գումարի մնացած մասը Ձեր ընտրությամբ կարող է գանձվել ինչպես Ձեր՝ IDBank-ի քարտերից ու հաշիվներից կամ Իդրամ դրամապանակից, այնպես էլ Idplus լոյալության հարթակում առկա բոնուսներից ու նվեր քարտերից:

ԿԻԲԵՌՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

ԾԱԾԿԱԳՐԻՉՆԵՐԻ ԳՐՈՀՆԵՐՆ ԱԿՏԻՎԱՑԵԼ ԵՆ

«Կասպերսկի» ընկերության լուծումները 2024-ի առաջին եռամսյակում ծածկագրիչ-տրոյացիների գրոհներից պաշտպանել են 83 270 ունիկալ օգտատիրոջ՝ մեկ տարի առաջվա 60 900-ի դիմաց: Ընկերության տվյալներով՝ ծածկագրիչների բոլոր այն զոհերի ավելի քան 20%-ը, որոնց տվյալները հրապարակվել են խմբավորումների DLS կայքերում (data leak site), տուժել են LockBit ծածկագրիչից: 2024-ի առաջին եռամսյակում հայտնաբերվել է ծածկագրիչների 9 նոր ընտանիք եւ այդ տեսակի վնասաբեր ծրագրերի 7070 նոր մոդիֆիկացիա, իսկ անցյալ տարվա նույն ժամանակահատվածում՝ ինը նոր ընտանիք եւ 3089 նոր մոդիֆիկացիա: Ընթացիկ տարվա առաջին երեք ամիսներին ծածկագրիչների զոհների ամենաշատը բախվել են Հարավային Կորեայում (0,75%), Բանգլադեշում (0,63%) եւ Լիբիայում (0,57%) գտնվող օգտատերերը: Մեկ տարի առաջ այդ ցուցակը գլխավորում էր Եմենը (1,50%), Բանգլադեշը (1,47%) նույն երկրորդ տեղում էր, եռյակը եզրափակում էր Թայվանը (0,65%):

«Կասպերսկի» ընկերության լուծումները 2024-ի առաջին եռամսյակում աշխարհով մեկ մայրներներից պաշտպանել են 394 120 ունիկալ օգտատիրոջ: Անցյալ տարվա հունվար-մարտին մայրներների օգտագործմամբ գրոհներ են հայտնաբերվել 403 211 ունիկալ օգտատերերի համակարգիչներում: Ընթացիկ տարվա առաջին երեք ամիսներին հայտնաբերվել է մայրներների 6601 նոր մոդիֆիկացիա՝նախորդ տարվա 1733-ի դիմաց: 2024-ի նույն ժամանակահատվածում մայրներներն ավելի շատ գրոհել են Տաջիկստանում (2,41%), Վենեսուելայում (1,91%) եւ Ղազախստանում (1,88%) գտնվող օգտատերերին: Մեկ տարի առաջ Տաջիկստանը (2,87%) գտնվում էր առաջին տեղում, Ղազախստանը (2,52%)՝ երկրորդում, իսկ ահա Ուզբեկստանը՝(2,30%)՝երրորդում:

Նվազել է նաեւ համացանցի միջոցով, այսինքն՝ վեբ-գրոհների քանակը: 2024-ի առաջին եռամսյակում «Կասպերսկի» ընկերության լուծումները հետ են մղել 658 181 425 գրոհ, որոնք իրականացվել են ամբողջ աշխարհում տեղակայված ինտերնետ-ռեսուրսներից: Գրանցվել է 152 841 402 եզակի URL, որոնց հակազդելու համար գործարկվել է վեբ-հակավիրուսը: 2023-ի հունվար-մարտին հետ է մղվել 865 071 227 գրոհ եւ արձանագրվել 246 912 694 եզակի URL: Ընթացիկ տարվա նույն ամիսներին ամենաշատը նման գրոհներ են հետ մղվել Հունաստանում (14,09%), Բուլղարիայում (13,01%) եւ Մադագասկարում (12,54%) գտնվող օգտատերերի համակարգիչներում: Մեկ տարի առաջ այդ վարկանիշը հետեւյալ տեսքն ուներ. Թուրքիա (16,88%), Թայվան (16,01%), Ալժիր (15,95%):

Ինչ վերաբերում է տեղային սպառնալիքներին (վնասաբեր ծրագրեր, որոնք հայտնաբերվել են անմիջապես օգտատերերի համակարգիչներում կամ դրանց միացված հանովի կրիչներում, կամ ի սկզբանե հայտնվել են համակարգչում ոչ բաց տեսքով, օրինակ՝ծրագրեր բարդ ինստալյատորների կազմում, ծածկագրված ֆայլեր), ապա 2024-ի առաջին եռամսյակում «Կասպերսկի»-ի ֆայլային հակավիրուսը գրանցել է 31 817 072 վնասաբեր եւ հնարավոր անցանկալի օբյեկտ, իսկ մեկ տարի առաջ՝43 827 839: Ամենաշատը տեղային սպառնալիքների ենթարկված երկրների եռյակը մնացել է անփոփոխ: Եթե ընթացիկ տարվա նույն ժամանակահատվածում այն ուներ հետեւյալ տեսքը. Թուրքմենստան (47,55%), Եմեն (43,57%), Աֆղանստան (42,37%), ապա մեկ տարի առաջ Եմենը (45,38%) առաջինն էր, Թուրքմենստանը (44,68%)՝երկրորդը, իսկ Աֆղանստանը (43,64%) նույն երրորդ տեղում էր:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Գեղարքունիք» ՋՕԸ-ի՝ Գեղարունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ/388,0 հա/, Գանձակ/180,0 հա/, Գեղարքունիք/120,0 հա/, Լանջաղբյուր/171,0 հա/, Նորատուս/80,0 հա/ եւ Սարուխան/260,0 հա/ գյուղերի վարչական տարածքներում գյուղատնտեսական /ոռոգում / նպատակով համապատասխանաբար՝ Գավառագետ՝ Հացառատի պոմպակայանով 150.5 լ/վ, Արծվաքարի թիվ 1 պոմպակայանով 31.3 լ/վ, Արծվաքարի թիվ 2 պոմպակայանով 31.3 լ/վ, ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 11.11 լ/վ, 100.2 լ/վ, Գավառագետի Գեղարքունիք վտակ՝Գեղարքունիքի թիվ 1 ջրամբարից 17.4 լ/վ, Գեղարքունիքի թիվ 2 ջրամբարից 52.1 լ/վ, Լանջաղբյուրի թիվ 1 ջրամբարից 23.1 լ/վ, ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 72.8 լ/վ, Գավառագետ՝ Նորատուսի պոմպակայան 28.9 լ/վ, ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 16.7 լ/վ, Գռիձորի առվից՝57.9 լ/վ, Սարուխանի պոմպակայանով (ինքնահոս առու) 31.3 լ/վ, ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 55.5 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից -18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հունիսի 17-ին՝ ժամը 16:00-ին,. հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ Ozon ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ozon-ը տեղեկացնում է Հայկ Կարապետյանին Հայաստանում ընկերության ղեկավար նշանակելու մասին:

Հայկ Կարապետյանն այսուհետ պատասխանատու կլինի Հայաստանում ընկերության ռազմավարական կառավարման, բիզնեսի զարգացման եւ հիմնական ցուցանիշների բարելավման ծրագրերի իրականացման համար:

Հայկը պաշտոնը ստանձնել է 2024 թվականի հունիսի 4-ին:

Ozon-ը հայկական շուկա է մուտք գործել 2023 թվականի հուլիսին՝ բացելով ներկայացուցչություն եւ Երեւանում գործարկելով տեսակավորման կենտրոն՝ 2000 քմ տարածքով:

2024 թվականի մայիսին ընկերությունը հայտարարեց Հայաստանում իր առաջին ֆուլֆիլմենտ (fulfillment) կենտրոնի գործարկման մասին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԳՄՍՆ

ԱՅՑԵԼԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Երեկ մեկնարկել է բուհերի ընդունելության 2024 թվականի միասնական քննությունների հիմնական փուլը. քննական առաջին օրը 1176 դիմորդ գիտելիքը ստուգել է «Քիմիա» առարկայից, 259-ը՝ «Ռուսաց լեզվից»:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը Երեւանի Գալուստ Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ եւ Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոցներում տեղակայված քննական կենտրոններում հետեւել է «Քիմիա» առարկայի միասնական քննությանը:

Մինչ քննության մեկնարկը նախարարը ԳԹԿ տնօրեն Արմեն Փաշայանի ուղեկցությամբ շրջել է քննասենյակներում, զրուցել դիմորդների հետ, հետաքրքրվել՝ ինչ մասնագիտություն են ընտրել, արդյոք մասնակցել են հունվարին կազմակերպված առաջին փուլի միասնական քննությանը եւ այլն: Դիմորդներից շատերը նշել են, որ հունվարին նույն առարկայի քննությունից դրական միավորներ են ստացել, անգամ միջինից բարձր արդյունք ունեն, սակայն երկրորդ անգամ են փորձում՝ միավորները բարելավելու հույսով:

Նախարարը հաջողություն է մաղթել դիմորդներին եւ խորհուրդ տվել ապավինել գիտելիքին. «Խորհուրդ եմ տալիս հիշել, որ ամենահուսալի ճանապարհը գիտելիքն է: Հույսը պետք է դնել գիտելիքի եւ սովորածի վրա՝ քննությունը հաղթահարելու համար»:

Այս տարի քննությունների ընթացակարգում կատարվել է նորամուծություն. մինչ քննասենյակ մտնելը աշակերտները համապատասխան սարքի՝ մետաղորսիչների միջոցով ստուգվում են՝ բացառելու կապի միջոցների առկայությունը քննության ընթացքում եւ ապահովելու բոլորի համար հավասար եւ անաչառ պայմաններ:

«Տեխնոլոգիաները զարգանում են, մեր երեխաներն էլ շատ հնարամիտ են դրանց օգտագործման հարցում, եւ լրացուցիչ միջոցների կարիք կար, որպեսզի վստահ լինենք, որ որեւէ մեկն իր հետ տեխնիկական սարք չի բերում», - մեկնաբանել է նախարար Ժաննա Անդրեասյանը: Ըստ նրա՝ արդեն երկրորդ տարին է, որ քննության երկրորդ հնարավորություն է տրվում դիմորդներին, ինչն արվել է՝ հաշվի առնելով սթրեսի ու լարվածության նվազեցումը, ըստ այդմ նաեւ որեւէ տեսակի սարքերի կարիքի բացառումը: Երկրորդ անգամ քննությանը մասնակցելու հնարավորությունը, նախարարի խոսքով, թույլ է տալիս դիմորդին առավել գիտակցված մոտենալ եւ պլանավորել առաջիկա անելիքը՝ կառավարելով ժամանակը:

«Մասնագիտությունների ընտրության հարցում նկատելի է տարկետման կարգի ազդեցությունը. Բնագիտական ուղղությամբ բավականին դրական արդյունքներ են գրանցվել»,- ասել է նախարարը: Նա անդրադարձել է նաեւ կրկնուսույցների դերի նվազման խնդրին, ինչին ուղղված է հանրակրթության նոր չափորոշիչը, որը գալիք ուսումնական տարում կներդրվի նաեւ 10-րդ դասարանում:

«10-րդ դասարանում ներդրվող նոր չափորոշիչը մեծ փոփոխություններ է ենթադրում. գնալու ենք կրեդիտային համակարգի ներդրման ճանապարհով, ինչը նշանակում է՝ երեխաները դպրոցում հավաքելու են կրեդիտներ, որոնք բուհում սովորելու համար որոշիչ դեր են ունենալու: Ինչպես նաեւ հրաժարվելու ենք հոսքային ուսուցումից՝ այն փոխարինելով անհատականացված ուսուցմամբ: Յուրաքանչյուր սովորողի առաջարկվելու է ընտրել իր մասնագիտական կողմնորոշմանը համապատասխանող առարկայացանկ: Սա ենթադրում է խորացված ուսուցում նախընտրած մասնագիտության համար անհրաժեշտ առարկաներից»,- ներկայացրել է նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նշենք, որ մարզերում «Քիմիա» առարկայից քննություն է հանձնում 677, Երեւանում՝ 499 դիմորդ: «Ռուսաց լեզու» առարկայից քննություն հանձնողները մարզերում 199-ն են, Երեւանում՝ 60-ը: Գործում է 15 քննական կենտրոն, որից 11-ը՝ մարզերում եւ 4-ը՝ Երեւանում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ ԱՆՑԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Օրերս հայտնի դարձան այն ջութակահարների անունները, որոնք հաղթահարել են Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթի 2-րդ փուլը եւ եզրափակիչ փուլում կպայքարեն դափնեկրի կոչման համար:

Մրցույթի երրորդ փուլ են անցել Սերգեյ Մկրտչյանը (Ռուսաստան), Ռիո Արաին (Ճապոնիա), Տոմոտակա Սեկին (Ճապոնիա), Զոֆիա Աննա Օլեսիկը (Լեհաստան):

Երեկ մեկնարկել է երրորդ՝ եզրափակիչ փուլը, որի ընթացքում մասնակիցները ելույթ են ունեցել մրցույթի պաշտոնական նվագախմբի՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ: Կատարման պարտադիր ծրագրում ներառված էր նաեւ Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը: Իսկ ահա հունիսի 13-ին՝ մրցույթի փակման գալա համերգի ընթացքում, կհայտարարվեն մրցանակակիրների անունները:

Հիշեցնենք, որ այս օրերին Երեւանում անցկացվող Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը կազմակերպում է «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամը: Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը 2013 թվականից Ժնեւում հիմնված Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) անդամ է եւ գործում է ֆեդերացիայի սահմանած կանոններով: Խաչատրյանի անվան մրցույթի գլխավոր աջակիցն է Երեւանի քաղաքապետարանը: Մրցույթն ավանդաբար կազմակերպվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵՐ ՀԱՎԱՔԱԿԱՆԻՑ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ ԻՆԴՈՆԵԶԻԱ

Հայաստանի հավաքականի 32-ամյա կոլումբացի կիսապաշտպան Վբեյմար Անգուլոն տեղափոխվել է Ինդոնեզիայի «Մալութ Յունայթեդ»՝ կնքելով մեկ տարվա պայմանագիր, հաղորդում է ակումբի ինստագրամյան էջը:

Նրա նախորդ ակումբը Երեւանի «Ալաշկերտն» էր, որի կազմում վարձակալությամբ անցկացրեց ավարտված մրցաշրջանի երկրորդ կեսը: Անգուլոյի տրանսֆերային իրավունքը պատկանում էր Երեւանի «Արարատ-Արմենիային», որի հետ պայմանագիրն ավարտվել է հունիսին:

«Մալութ Յունայթեդը» նվաճել է Ինդոնեզիայի ուժեղագույնների լիգայի ուղեգիր: 2020 թվականին Հայաստանի քաղաքացիություն ստացած Վբեյմար Անգուլոն ազգային թիմում մասնակցել է 10 հանդիպման, խփել 2 գոլ:

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐՈ–2024–Ի ԺԱՄԱՆԱԿ

Գերմանիայում կայանալիք Եվրո-2024-ի ժամանակ ահաբեկչություն իրականացնելու նախապատրաստության կասկածանքով եռաքաղաքացիություն ունեցող անձ է ձերբակալվել, հայտնում է Bild-ը:

Գերմանիայի, Մարոկկոյի եւ Լեհաստանի քաղաքացիություն ունեցող 23-ամյա Սուֆյան Թ.-ն ՈւԵՖԱ-ի միջոցով փորձել է աշխատանքի անցնել որպես Եվրոպայի առաջնության ստյուարդ:

Հետաքննությամբ պարզվել է, որ այդ անձը աշխատանքի անցնելու դիմումներ է ներկայացրել նաեւ Rock am Ring երաժշտական փառատոնի եւ «Նյուրբուրգրինգ 24 ժամ» ավտոմրցարշավի ժամանակ:

Քննիչների կարծիքով՝ ձերբակալվածը կարող է լինել «Վիլայաթ Խորասան» ահաբեկչական խմբավորման անդամ: Այս խմբավորումն էր մարտին Ռուսաստանի «Կրոկուս Սիթի Հոլում» ահաբեկչություն իրականացրել:

ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ

Եվրո 2024-ին մասնակցող թիմերի հայտացուցակներում ընդգրկված են 35 տարեկանից բարձր 28 ֆուտբոլիստներ: Սա 8-ով ավելի է, քան նախորդ առաջնությունում: Նրանցից ամենատարեցը Պորտուգալիայի հավաքականի պաշտպան 41-ամյա Պեպեն է:

Վարկանիշային աղյուսակի առաջին հորիզոնականը զբաղեցնում է Պորտուգալիայի ազգային հավաքականից Պեպեն, որը փետրվարին դարձավ 41 տարեկան: Երկրորդ տեղում նրա հայրենակից Կրիշտիանու Ռոնալդուն է (39 տարեկան): Երրորդ ամենատարեց ֆուտբոլիստը Մադրիդի «Ռեալի» խորվաթ կիսապաշտպան Լուկա Մոդրիչն է:

Տասնյակում ընդգրկվել են նաեւ Խեսուս Նավասը (Իսպանիա), Գիորգի Լորիան (Վրաստան), Մանուել Նոյերը (Գերմանիա), Օլիվյե Ժիրուն (Ֆրանսիա), Պետեր Պեկարիկը (Սլովակիա), Կասպեր Շմեյխելը (Դանիա) եւ Յուրայ Կուչկան (Սլովակիա):

● Հունիսի 15-ին՝ ժամը 19:00-ին, Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Վերջին ծաղրածու» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 2000-4000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՊԱՀՈՒՍՏ

ՀԱՐՑ. Ի՞նչ նպատակներով է օգտագործվում պետական պահուստը:

Մարիամ Անտոնյան (27 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Պետական պահուստը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության զորահավաքային կարիքները ապահովելու, արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջացման դեպքում ապահովելու համար հնարավոր հետեւանքների նվազեցման ու վերացման, փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների եւ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, հումքային եւ վառելիքաէներգետիկ պաշարների, ինչպես նաեւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների մատակարարման ժամանակավոր խափանումների ժամանակ ներքին շուկայում պահանջարկի եւ առաջարկի միջեւ անհամամասնությունների առաջացման դեպքում պետական աջակցություն ցուցաբերելու տնտեսության տարբեր ոլորտներին, կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԱԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական պահուստը նաեւ օգտագործվում է մարդասիրական օգնություն եւ պարենային ճգնաժամի դեպքում կարգավորող ազդեցություն շուկայի վրա ցուցաբերելու համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցը այլ անձի հանձնելու դեպքում ի՞նչ չափով տուգանք է առաջադրվում:

Հայկ Մուրադյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ մաքսային օրենսգրքի 198 հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն առանց մաքսային մարմնի թույլտվության մասնակի կամ ամբողջությամբ հանձնելը, օտարելը, ոչնչացնելը կամ կորցնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ մաքսային օրենսգրքի 192 հոդվածի համաձայն՝ մաքսային հսկողության ներքո գտնվող տրանսպորտային միջոցի մեկնումն առանց մաքսային մարմնի թույլտվության առաջացնում է տուգանքի նշանակում՝ 100,000 դրամի չափով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վերսալի այցելուները տարհանվել են հրդեհային ազդանշանի միացումից հետո, իսկ լրատվամիջոցների կադրերը ցույց են տալիս, որ շենքից ծուխ է բարձրանում:

Միջադեպի պատճառները դեռ չեն հաղորդվում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+8 +12 / +22 +26
Կոտայքի լեռներ	+8 +12 / +23 +26
Կոտայքի նախալեռներ	+15 +17 / +28 +30
Գեղարքունիք	+10 +13 / +21 +24
Լոռի	+9 +13 / +24 +27
Տավուշ	+15 +17 / +28 +31
Արագածոտնի լեռներ	+9 +13 / +21 +24
Արագածոտնի նախալեռներ	+15 +18 / +28 +31
Արարատ	+16 +18 / +31 +33
Արմավիր	+16 +18 / +31 +33
Վայոց ձորի լեռներ	+8 +11 / +22 +24
Վայոց ձորի նախալեռներ	+16 +18 / +31 +33
Սյունիքի հովիտներ	+18 +22 / +29 +32
Սյունիքի նախալեռներ	+13 +15 / +25 +28
ԼՂՀ	+13 +14 / +25 +26
Երեւան	+23 +25 / +29 +31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*